**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

**«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ**

*17 սեպտեմբերի, 2020թ.*

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում ենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են՝

- խմբակցության որոշումն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու մասին.
- նախագծի ընդունման հիմնավորումը.
- տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում է օրենքի համապատասխան հոդվածում առաջարկվող լրացումը:

Նախագծի հիմնական զեկուցողն է Աննա Կոստանյանը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծն օրենքով սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 07 թերթ:

Հարգանքով՝ **ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0095 Երևան,
Բաղրամյան 19, 134

Republic of Armenia
Yerevan 0095
19 Baghramyan Street, 134

+374 11 513 423 | www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## *Ո Ր Ո Շ Ու Մ*
## *ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈւԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈւ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 65-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր *2020* թվականի *սեպտեմբերի 17-ի* նիստում

**_Ո Ր Ո Շ Ե Ց_**

հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և Ազգային ժողովի քննարկմանն առաջադրել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

*126 Է. Մարուքյան* __________

*125 Գ. Գորգիսյան* __________

*116 Ա. Խաչատրյան* __________

*117 Ա. Սամսոնյան* __________

*118 Հ. Բաբայան* __________

*119 Ա. Եղիազարյան* __________

*120 Ա. Կոստանյան* __________

*121 Կ. Սիմոնյան* __________

*122 Ս. Գրիգորյան* __________

*123 Ս. Ալեքսանյան* __________

*124 Գ. Բաղդասարյան* __________

*127 Ս. Ստեփանյան* __________

*128 Է. Անդրեասյան* __________

*129 Ռ. Ստեփանյան* __________

*130 Տ. Սիմոնյան* __________

*131 Հ. Այվազյան* __________

*132 Ս. Մինասյան* __________

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# *Օ Ր Ե Ն Ք Ը*
# «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունը «հանրակրթական» բառից հետո լրացնել «, միջին մասնագիտական» բառերով:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ
## «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «Օրենք») գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածը, ամրագրելով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին նպատակային ուսումնառության համար տարկետում տալու հիմքերը, տարկետման իրավունք է սահմանում նաև Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների համար՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրանց 19 տարին լրանալու օրը: Միևնույն ժամանակ Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտի օրվա դրությամբ հանրակրթական կամ նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ:

Վերը վկայակոչված իրավակարգավորումներից բխում է, որ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ կրկնին տարկետում կարող է տրվել Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հիմքով նախկինում տարկետում ստացած, սակայն տրված տարկետման ավարտի օրվա դրությամբ ուսումնառությունը չավարտած, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա, հանրակրթական կամ նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսումնառություն անցնող քաղաքացիներին:

Այսինքն՝ միջին մասնագիտական հաստատություններում սովորող, Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով տարկետում ստացած, սակայն տրված տարկետման ավարտի օրվա դրությամբ ուսումնառությունը չավարտած քաղաքացիներին Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքով տարկետում չի կարող տրվել:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները սահմանող «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով ինչպես նախնական մասնագիտական (արհեստագործական), այնպես էլ միջին մասնագիտական կրթական ծրագրերը համարվում են մասնագիտական հիմնական կրթական ծրագրի տեսակներ: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում 12-ամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն անցնելու համար սահմանում է միևնույն նախապայմանը՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության առկայությունը, նույն օրենքի 4-րդ և 5-րդ մասերով արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում ամրագրված են պետական քաղաքականության նույնական սկզբունքներ և խնդիրներ: Մասնավորապես, պետությունը պարտավորվում է ինչպես արհեստագործական, այնպես էլ միջին մասնագիտական բնագավառում հավասարապես իրականացնել քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մասնագիտական կրթության իրավունքի ապահովումն ու պաշտպանությունը, ինչպես նաև ապահովել կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը:

Վերոշարադրյալ իրավանորմերն իրենց համակցության մեջ վերլուծելու արդյունքում՝ պարզ է դառնում, որ օրենսդիրը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի հիման վրա ուսումնառությունը միևնույն հարթակի վրա է դիտարկել՝ այդ ոլորտում պետության վրա նույնաբնույթ պարտավորություններ դնելով: Սակայն Օրենքով միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառություն անցնող քաղաքացիների համար սահմանված է խտրական մոտեցում, և, ի տարբերություն նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսումնառվող նախկինում տարկետում ստացած, սակայն տրված տարկետման ավարտի օրվա դրությամբ ուսումնառությունը չավարտած, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների, նույն պայմաններում գտնվող միջին մասնագիտական հաստատություններում սովորող քաղաքացիները զրկված են Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված

հիմքով տարկետում ստանալու, արդյունքում՝ նաև 19 տարեկանը լրանալուց հետո ուսումը շարունակելու և ավարտին հասցնելու հնարավորությունից:

Այսինքն՝ այստեղ անտեսվել են «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերը մեջբերված դրույթները:

Առաջարկվող փոփոխության արդյունքում՝ հանրակրթական և նախնական (արհեստագործական) ծրագրով սովորողների հետ մեկտեղ նաև միջին մասնագիտական ծրագրով սովորող քաղաքացիներին վերջիններիս 19 տարեկանը լրանալուց հետո հնարավորություն կտրվի շարունակելու և ավարտին հասցնելու ուսումը:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**Օ Ր Ե Ն Ք Ը**
**«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ**
**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 22.**
**Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը**

1. Սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով.

2) ընտանեկան պայմաններից ելնելով:

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ընտրված քաղաքացուն՝ պատգամավորական լիազորությունների ողջ ժամկետով:

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև նպատակային ուսումնառության համար՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը.

2) Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացուն տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտից հետո շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս քաղաքացու առողջական վիճակի

փորձաքննությունն իրականացվում է պարտադիր զինվորական ծառայության ենթակա պահեստազորի սպաների փորձաքննության համար սահմանված կարգով, ինչպես նաև նշված քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

5. Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտի օրվա դրությամբ հանրակրթական, միջին մասնագիտական կամ նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք ունեցող կամ այդ հիմքով տարկետում ստացած, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն տարկետում ստացած քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել տարկետման իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

***(22-րդ հոդվածը լրաց. 21.03.18 ՀՕ-176-Ն, 12.07.18 ՀՕ-370-Ն, 04.06.19 ՀՕ-57-Ն)***